

**ՔՐԻՍՏԻՆԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի, քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՏԱԹՇՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

**ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ  
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻՑ ԴՈՒՐՍ**

Դատախազության արտաքրեական լիազորությունների խնդիրն այսօր բազմաթիվ քննարկումների, տարածայնությունների ու կարծիքների առարկա է: Արդյո՞ք անհրաժեշտ կամ նպատակահարմար է օժտել դատախազությանը նման լիազորություններով, թե՛ ոչ:

Եվրոպայի գլխավոր դատախազներն իրենց ամենամյա կոնֆերանսների շրջանակներում բազմիցս անդրադարձել են այս թեմային, մասնավորապես՝ 2003թ. հունիսի 1-ից 3-ը Բրատիսլավայում տեղի ունեցած 4-րդ կոնֆերանսին, 2004թ. մայիսի 23-ից 25-ը Ցեխում տեղի ունեցած 5-րդ կոնֆերանսին, 2005թ. մայիսի 29-ից 30-ը Բուդապեշտում տեղի ունեցած 6-րդ կոնֆերանսին, 2006թ. հուլիսի 5-ից 6-ը Մոսկվայում տեղի ունեցած 7-րդ կոնֆերանսին և 2008թ. հուլիսի 2-ից 3-ը Սանկտ-Պետերբուրգում տեղի ունեցած 8-րդ կոնֆերանսին<sup>1</sup>:

Դատախազության դերը քրեաիրավական ոլորտում ունի միջազգային իրավական կարգավորում, մասնավորապես. Եվրոպայի խորհրդի շրջանակներում այս ոլորտին է վերաբերում Նախարարների կոմիտեի թիվ (2000) 19 Հանձնարարականը («Դատախազության դերը քրեական արդարադատության համակարգում»): Նշենք, որ ի տարբերություն դատախազության քրեաիրավական լիազորությունների, քրեաիրավական ոլորտից դուրս դատախազության դերի վերաբերյալ միջազգային համընդհանուր նորմեր չկան:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում դատախազության արտաքրեական լիազորությունների վերաբերյալ առկա է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽ) թիվ 3 Եզրակացությունը<sup>2</sup>:

ԵԴԽ -ն ստեղծվել է Եվրոպայի խորհր-

դի Նախարարների կոմիտեի կողմից 2005թ. հունիսի 13-ին<sup>3</sup>: Այս կառույցի նպատակներ են՝

1. Պատրաստել եզրակացություններ դատախազության գործունեության հիմնախնդիրների վերաբերյալ:

2. Նպաստել ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ (2000) 19 Հանձնարարականի արդյունավետ իրագործմանը:

Այժմ անդրադառնանք ԵԴԽ թիվ 3 Եզրակացության ուսումնասիրությանը: Հիշյալ եզրակացությունն ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 15-ից 17-ը Ստրասբուրգում կայացած ԵԴԽ 3-րդ լիագումար նիստում: Փաստաթուղթը բաղկացած է 3 մասերից՝ ներածություն, ներկա իրավիճակ, եզրահանգումներ և առաջարկություններ, որոնք ներառում են 40 կետեր կամ հոդվածներ: ԵԴԽ թիվ 3 Եզրակացության համար իրավական հիմք են հանդիսացել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, Եվրոպական դատարանի նախադեպերը, ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ (2000) 19 Հանձնարարականը, ԵԽ խորհրդարանական վեհաժողովի թիվ 1604 (2003) Հանձնարարականը՝ «Օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական հասարակությունում դատախազության դերի մասին», ԵԽ Նախարարների կոմիտեի ռեպլիկը այդ փաստաթղթին, ինչպես նաև վերը նշված կոնֆերանսների եզրակացությունները: Հարկ է նշել, որ այս փաստաթուղթը կազմվել է ԵԽ 44 պետությունների դատախազություններ ուղարկված հարցաթերթիկի պատասխանների հիման վրա:

Այսպիսով, Եվրոպայում կան շատ դատախազական համակարգեր, որոնք օժտված են արտաքրեական լիազորություններով, ինչը պայմանավորված է օրենսդրական և պատմական ավանդույթներով<sup>4</sup>:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ ԵԽ անդամ-պետությունները կարելի է բաժանել երկու խմբի<sup>5</sup>,

1. երկրներ, որտեղ դատախազությունը քրեախրավական ոլորտից դուրս լիազորություններ չունի,

2. երկրներ, որտեղ դատախազությունը քրեախրավական ոլորտից դուրս ունի որոշակի կամ լայն լիազորություններ:

Առաջին խմբի երկրներն են՝ Էստոնիան, Ֆինլանդիան, Վրաստանը, Իսլանդիան, Մալթան, Նորվեգիան, Շվեդիան, Շվեյցարիան և Միացյալ Թագավորությունը:

Երկրորդ խմբում են՝ Ալբանիան, Հայաստանը, Ավստրիան, Ադրբեջանը, Բելգիան, Բուլղարիան, Խորվաթիան, Չեխիան, Կիպրոսը, Գանիան, Ֆրանսիան, Մակեդոնիան, Գերմանիան, Հունաստանը, Հունգարիան, Իռլանդիան, Իտալիան, Լատվիան, Լիխտենշտեյնը, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Մոլդովան, Մոնակոն, Մոնտենեգրոն, Նիդերլանդները, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Ռուսաստանը, Սան Մարինոն, Սլովակիան, Սլովենիան, Իսպանիան, Թուրքիան և Ուկրաինան:

Նշենք, որ երկրորդ խմբում առանձնանում են 13 պետություններ, որոնց դատախազությունները հայտարարել են, որ քրեախրավական ոլորտից դուրս իրենց լիազորություններն առանձնապես կարևոր չեն կամ շատ հազվադեպ են կիրառվում: Դրանք են՝ Ալբանիան, Ավստրիան, Ադրբեջանը, Գանիան, Գերմանիան, Հունաստանը, Իռլանդիան, Իտալիան, Լիխտենշտեյնը, Լյուքսեմբուրգը, Մոլդովան, Սան Մարինոն, Սլովենիան:

Այսպիսով, ԵԽ անդամ-պետությունների մեծամասնության դատախազություններն ունեն արտաքրեական լիազորություններ<sup>6</sup>, որոնք վերաբերում են քաղաքացիական, վարչական, ընտանեկան, աշխատանքային, առևտրային, բնապահպանական, սոցիալական, ընտրական իրավունքի բնագավառներին:

ԵԽ անդամ-պետություններում դատախազները, իրականացնելով իրենց արտաքրեական լիազորությունները, մասնավորապես մասնակցում են այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝

1. ամուսնությունն անվավեր ճանաչելը,
2. քաղաքացուն մահացած ճանաչելը,
3. երեխայի որդեգրումը վերացնելը,
4. հայրության (մայրության) վիճարկումը,

5. առողջապահական հաստատություններում անձանց պահելը,

6. գործունակության սահմանափակումը,

7. երեխաների իրավունքների պաշտպանությունը,

8. պետության շահերի պաշտպանությունը,

9. տնօրենների որակագրկումը կամ ընկերությունների լուծարումը,

10. շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Վերոնշյալի հիման վրա կարելի է առանձնացնել 5 նպատակներ<sup>7</sup>, որոնք ընկած են դատախազության արտաքրեական լիազորությունների իրականացման հիմքում՝

- օրենքի գերակայության ապահովում,
- մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն,
- պետության շահերի պաշտպանություն,
- հանրային շահերի պաշտպանություն,
- դատարանների իրավասության ներդաշնակեցում:

ԵԴԽԻ-ի մեկնաբանմամբ, ներկայումս դատախազության գործունեությունը քրեախրավական ոլորտից դուրս առաջին հերթին սահմանվում է որպես հասարակության՝ մարդու իրավունքների և պետության շահերի պատշաճ ապահովմանն ուղղված կարիք:

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհուրդն առանձնացնում է մի շարք սկզբունքներ<sup>8</sup>, որոնցով պետք է առաջնորդվեն դատախազներն իրենց արտաքրեական լիազորություններն իրականացնելիս՝

1. իշխանությունների տարանջատման սկզբունք,
2. անկողմնակալության և արդարության սկզբունք,
3. հանրային և պետական շահերի ապահովման սկզբունք,
4. լիազորությունների օրենսդրական կարգավորման սկզբունք,
5. դատախազական գործունեությանը անհարկի միջամտության անթույլատրելիության սկզբունք,
6. հավասարության սկզբունք,
7. res judicata,
8. թափանցիկության սկզբունք,
9. դատախազի գործողությունների կամ անգործության բողոքարկում,
10. նախադեպային իրավունքի զարգա-

ցում:

ԵԴԽԽ-ն կարևորում է նաև արտաքրեական ոլորտում դատախազների մասնագիտացումը և հնարավորության դեպքում համապատասխան ստորաբաժանումների ստեղծումը: Այս համատեքստում նշենք, որ ՀՀ գլխավոր դատախազության կազմում գործում է պետական շահերի պաշտպանության վարչությունը, զինվորական կենտրոնական դատախազության կազմում՝ պետական շահերի պաշտպանության բաժին, իսկ տարածքային ստորաբաժանումներում՝ առանձին դատախազներ զբաղվում են կոնկրետ այս լիազորության իրականացմամբ:

ԵԴԽԽ թիվ 3 (2008) Եզրակացությունը հատուկ ուշադրություն է դարձնում նաև դատախազության համագործակցությանը իրավապահ այլ մարմինների, օմբուդսմենի ինստիտուտների ու հասարակական կազմակերպությունների հետ:

Ինչպես տեսնում ենք, ԵԽ անդամ-երկրների մի մասը պարտադիր չի համարում ապահովել դատախազի լիազորությունները քրեաիրավական ոլորտից դուրս, և այդ խնդիրները չի դիտարկում որպես հիմնական լիազորություններ: Չնայած այդ հանգամանքին՝ չենք կարող ասել, որ այն անդամ-երկրները, որտեղ դատախազները լիազորություններ չունեն՝ գործելու քրեաիրավական ոլորտից դուրս, սխալ են գործում կամ պետք է վերանայեն իրենց դատախազության մարմինների համակարգը:

Համեմատելով անդամ-երկրների այդ երկու խմբերը և դատախազների գործունեության վերաբերյալ պահանջները՝ կարելի է սահմանել, որ դատախազների խնդիրները քրեաիրավական ոլորտից դուրս չեն համարվում անխուսափելի, բայց իրենց առկայության դեպքում օգտակար են և խելամիտ:

ԵԽ խորհրդարանական վեհաժողովի թիվ 1604 (2003) «Օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական հասարակությունում դատախազության դերի մասին» հանձնարարականը նախատեսում է, որ՝

1. մարդու իրավունքների ընդհանուր պաշտպանության ոլորտում դատախազի լիազորությունները չպետք է հանգեցնեն որևէ շահերի բխման և վանեն պետության կողմից իրենց իրավունքների պաշտպանությանը հասնել ձգտող մարդկանց,

2. դատախազությանը լրացուցիչ գործառույթներ տալիս պետք է պահպանվի իշխանու-

թյունների տարանջատման սկզբունքը և ապահովվի նրա լիարժեք անկախությունը իր գործերին ցանկացած իրավունքի ճյուղի միջամտությունից, 3. դատախազների լիազորությունները և գործառույթները պետք է սահմանափակվեն հանցագործության կատարման մեջ մեղավոր անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելով և քրեական արդարադատության համակարգի միջոցով պետական շահերի պաշտպանության խնդիրներով, իսկ այլ գործառույթներ կատարելու համար ստեղծվեն առանձին, պատշաճ կարգով զետեղված և արդյունավետ մարմիններ:

Այսինքն, կարելի է ենթադրել, որ ԵԽ խորհրդարանական վեհաժողովը չի խրախուսում դատախազի արտաքրեական լիազորությունները:

2005թ. հունիսի 10-11-ը տեղի ունեցած 63-րդ լիագումար նիստին Վենետիկյան հանձնաժողովը Եզրակացություն է ընդունել «Դատախազության մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքի վերաբերյալ: Հիշյալ եզրակացությամբ հաստատվել է, որ ռուսական դատախազությունը պատկանում է այն դատախազությունների թվին, որոնք չեն համապատասխանում խորհրդարանական վեհաժողովի կողմից հաստատված մոդելին: Բացի այդ՝ դատախազության արտաքրեական լիազորությունների վերաբերյալ նշվում է, որ դրանք պետք է բացառիկ բնույթ կրեն, դատախազության մյուս գործառույթների համեմատ գերիշխող չլինեն, հստակ սահմանված լինեն, ուղղված լինեն պետության և հանրության, խոցելի խմբերի շահերի պաշտպանությանը<sup>10</sup>:

Խոցելի խմբերի իրավունքների և շահերի պաշտպանությանը մեծ ուշադրություն է դարձվել նաև Սանկտ Պետերբուրգում կայացած Եվրոպայի գլխավոր դատախազների կոնֆերանսի շրջանակներում<sup>11</sup>:

Ինչ վերաբերում է հանրային շահերի պաշտպանությանը դատախազության կողմից, ապա նշենք, որ այս հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մի շարք որոշումներում<sup>12</sup>, մասնավորապես, Բացանկան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով Եվրոպական դատարանը օրինաչափ է համարում դատախազի գործունեությունը հանրային (հասարակական) շահերի պաշտպանության ոլորտում:

Մենք կարևորում ենք դատախազության արտաքրեական լիազորությունները, սակայն կար-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

ծում ենք, որ արդի ժամանակաշրջանում դրանք քյան խոցելի խմբերի՝ անչափահասների, անգործունակների, հաշմանդամների, ծերերի իրավունքների և շահերի պաշտպանությամբ:

<sup>1</sup> Տե՛ս [http://www.coe.int/t/dghl/cooperation/ccpe/conferences/default\\_en.asp](http://www.coe.int/t/dghl/cooperation/ccpe/conferences/default_en.asp).  
<sup>2</sup> Տե՛ս [https://wcd.coe.int/wcd/ViewDoc.jsp?Ref=CCPE\(2008\)OP3&Language=lanEnglish&Ver=original&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864](https://wcd.coe.int/wcd/ViewDoc.jsp?Ref=CCPE(2008)OP3&Language=lanEnglish&Ver=original&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864).  
<sup>3</sup> Տե՛ս [http://www.coe.int/t/DGHL/cooperation/ccpe/default\\_en.asp](http://www.coe.int/t/DGHL/cooperation/ccpe/default_en.asp)  
<sup>4</sup> Տե՛ս ԵԳԽԽ թիվ 3 (2008) Եզրակացության 4-րդ հոդված:  
<sup>5</sup> Տե՛ս ԵԳԽԽ թիվ 3 (2008) Եզրակացության 15-րդ հոդված:  
<sup>6</sup> Տե՛ս ԵԳԽԽ թիվ 3 (2008) Եզրակացության 18-րդ հոդված:  
<sup>7</sup> Տե՛ս ԵԳԽԽ թիվ 3 (2008) Եզրակացության 25-րդ հոդված:  
<sup>8</sup> Տե՛ս ԵԳԽԽ թիվ 3 (2008) Եզրակացության 34-րդ հոդված:  
<sup>9</sup> Տե՛ս ԵԽ խորհրդարանական վեհաժողովի թիվ 1604 (2003) Հանձնարարականի 7-րդ հոդվածի V մասի a, b և c կետեր: [http://www.coe.int/t/r/parliamentary\\_assembly/\[russian\\_documents\]/\[2003\]/Rec1604.asp](http://www.coe.int/t/r/parliamentary_assembly/[russian_documents]/[2003]/Rec1604.asp).  
<sup>10</sup> Տե՛ս [http://www.venice.coe.int/docs/2005/CDL-AD\(2005\)014-e.asp](http://www.venice.coe.int/docs/2005/CDL-AD(2005)014-e.asp).  
<sup>11</sup> Տե՛ս [http://www.coe.int/t/dghl/cooperation/ccpe/conferences/2008/ConclusionsRussia\\_ru.pdf](http://www.coe.int/t/dghl/cooperation/ccpe/conferences/2008/ConclusionsRussia_ru.pdf).  
<sup>12</sup> Տե՛ս Սենչինսկայան ընդդեմ Ռուսաստանի, Սթիլն ու Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության, Յավորիվսկայան ընդդեմ Ռուսաստանի գործերով ԵԳԽ որոշումները:

**РЕЗЮМЕ**

*Роль прокуратуры вне уголовно-правовой сфере*

В этой статье были рассмотрены полномочия прокуроров вне сферы уголовного права. Также были указаны различия правового регулирования данного вопроса в правовых системах различных стран. И конечно результаты обсуждения данной темы в международных организаций и на международных конференциях.

**SUMMARY**

*The role of prosecution service outside the criminal law field*

In this article we are going to look through the power of prosecutors outside the criminal law field, as well as to talk about the differences of legal systems of different countries in the regulation of the role of prosecutors outside the criminal law field. And of course we will look through the conclusions of the discussions of this theme in international organizations and at different international conferences.